ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/13

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 31.01.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/13 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 31.01.2018թ. բողոքով հայտնել է, որ Ընկերությունն, ուսումնասիրելով «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետով՝ հրատապ բաց մրցույթով առողջության ապահովագրության ծառայության գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) գտնում է, որ այն

կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

«ԵՊՀ» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Մասնակիցներիտվյալները			Նախահաշվայինգինը ՀՀդրամ, ներառյալ ԱԱՀ-ն
	«ՍԻԼԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	«ՆաիրիԻնշուրանս» ԱՍՊԸ	
	գնայինառաջարկը(ՀՀ դրամ, առանցԱԱՀ-ի)			
	108,000,00	140,700,000	157,200,000	200,000,000

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Վերը նշված վավերապայմաններից 7.1 ենթակետի խախտման վերաբերյալ բողոք է ներկայացվել Ընկերության կողմից, իսկ 7.4-րդ կետի խախտման վերաբերյալ համանման բողոք (այսուհետ՝ Համանման բողոք) է ներկայացվել Կազմակերպության կողմից:

19.01.2018թ. Գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/51 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում)՝ մասնակիորեն բավարարվել է Ընկերության բողոքը, իսկ Կազմակերպության կողմից ներկայացված համանման բողոքը մերժվել՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ, 41-րդ կետերի պահանջների խախտման հիմնավորմամբ:

Միաժամանակ, 24.01.2018թ. գնահատման հանձնաժողովի կողմից կազմված հայտերի գնահատման մասին թիվ 4 արձանագրությամբ մերժվել է Ընկերության կողմից ներկայացված հայտը՝ Համանման բողոքում ներկայացված հիմքերով և պատճառաբանությամբ:

Ըստ Արձանագրության 1.5.-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, որ Ընկերության բանկային երաշխիքում առկա է համանման խնդիր, ինչ Կազմակերպության կողմից ներկայացված հայտում. այն է՝ Ընկերության կողմից ներկայացված հայտը հակասում է Ընթացակարգի 7.4-րդ կետի պահանջներին: Այսպես՝ հայտը ներկայացվել է 14.12.2017թ.-ին, իսկ նույն օրը կնքված բանկային երաշխիքի գործողության ժամկետ է սահմանվել մինչև 10.05.2018թ.-ը, այսինքն՝ երաշխիքը ներկայացվել է սահմանված 90 աշխատանքային օրվա ժամկետի գերազանցմամբ:

Ընկերության կողմից նախկինում ներկայացված բողոքում ներկայացվել էր խախտում, որի համաձայն Կազմակերպության կողմից ներկայացված բանկային երաշխիքը ներկայացվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ և պետք է հավասար լիներ հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին, սակայն գերազանցում էր այն, և դա Ընկերության համար համապատասխան բողոք ներկայացնելու հիմք էր հանդիսացել:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Չնայած այն փաստին, որ նշված դրույթի խախտմանն արդեն իսկ անդրադարձել է կատարվել Ընկերության կողմից ներկայացված բողոքում, սակայն Ընկերությունը հարկ է համարում այս անգամ ընդգծել նշված դրույթի իմպերատիվ բնույթը և համեմատական եզրեր անցկացնել Համանման բողոքի համար հիմք հանդիսացող 90 աշխատանքային օրվա ենթադրյալ խախտման հետ:

Այսպես՝ Օրենքի 32-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքը, չպետք է գերազանցի հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսը, իսկ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ բանկային երաշխիքը պետք է հավասար լինի հինգ տոկոսին:

Մինչդեռ, Օրենքը չի սահմանում, որ բանկային երաշխիքը պետք է տրված լինի ոչ ավել, քան 90 աշխատանքային օր ժամկետով, իսկ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանվում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր: Վերը նշված ձևակերպման մեջ ի տարբերություն հրավերի 7.1-րդ կետի՝ առկա չէ հստակ իմպերատիվ պահանջ, որը կսահմանափակեր 90 աշխատանքային օրը գերազանցող վավերականության ժամկետ ունեցող հայտի ապահովում ներկայացնելու հնարավորությունը, ինչպես օրինակ Օրենքի 32-րդ հոդվածում ներառված «մինչև 5 տոկոս» սահմանումը:

Միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Վերոգրյալ իրավական նորմի վերլուծությունից ուղղակիորեն բխում է այն, որ բոլոր այն դեպքերում, եթե իրավական նորմի մեկնաբանությունից բխեր, որ հայտի ապահովման վավերականությունը չպետք է գերազանցի 90 աշխատանքային օրվա ժամկետը՝ այդ մասին պետք է ուղղակիորեն և տառացի նշված լիներ վեճի առարկա իրավական նորմում, ինչը սակայն բացակայում է: Իսկ փաստացի առկա «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանվում է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր, և ոչ օրինակ՝ «հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը

ներկայացնելու օրվանից հաշված ոչ ավել, քան 90 աշխատանքային օր», կամ՝ «հայտի ապահովման վավերականությունը պետք է հավասար լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրվան», կամ՝ «հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված մինչև 90 աշխատանքային օր»:

Ընկերությունը հատկանշական է համարում հատկապես այն հանգամանքը, որ նախկինում Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է որպես ներկայացված պահանջներին համապատասխանող, սակայն Արձանագրությամբ կատարվել է ներկայացված հայտի վերագնահատում, որի արդյունքում մերժվել է Ընկերության կողմից ներկայացված հայտը:

Համաձայն Օրենքի 34-րդ հոդվածի՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում»:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 Արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցրած «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի հայտը մերժվել է, իսկ մյուս երկու մասնակիցների՝ երկրորդ տեղ զբաղեցրած Կազմակերպության և երրորդ տեղ զբաղեցրած Ընկերության կողմից ներկայացված հայտերը ճանաչվել են հրավերի չափանիշներին համապատասխանող: Կազմակերպության կողմից ներկայացված հայտը մերժվել է Որոշմամբ՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված բողոքը: Տվյալ դեպքում անհասկանալի է, ինչ իրավական նորմերի հիման վրա է գործել գնահատման հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված հայտը հրավերին չհամապատասխանող ճանաչելիս և գնման ընթացակարգը չկայացած ճանաչելիս այն դեպքում, երբ.

1. Ընկերության հայտը նախապես գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող,
2. Կազմակերպության կողմից ներկայացված Համանման բողոքը մերժվել է,
3. Առկա չէ հայտի վերագնահատման համար որևիցե իրավական և փաստական հիմք:

Ավելին, Համաձայն Կարգի 3-րդ գլխի 14-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը՝

1) հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը՝ բացառությամբ փակ պարբերական մրցույթի նախաորակավորման հայտարարության.

2) փոփոխություններ է կատարում գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին).

6) գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Վերը ներկայացվածից ուղղակիորեն բխում է, որ Գնահատող հանձնաժողովն իր թիվ 4 Արձանագրությունը կազմելիս դուրս է եկել իր՝ Օրենքով և Կարգով սահմանված

լիազորությունների սահմանից և կատարել է Ընկերության կողմից ներկայացված հայտի վերագնահատում՝ արդյունքում՝ մերժելով Ընկերության հայտը, այն պարագայում, երբ ոչ միայն չուներ նման լիազորություն, այլ նաև՝ նախկինում այդ նույն հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ Ընկերության հայտը ներկայացված հրավերի վավերապայմաններին համապատասխանող ճանաչելու մասին:

«Նաիրի ինշուրանս» ՍՊԸ-ն բողոքով << գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 1.6-րդ կետով կայացված որոշումը.

2. Դադարեցնել «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 1.7-րդ կետով կայացված որոշումը:

«Նաիրի ինշուրանս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.02.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>«ԵՊՀ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«ԵՊՀ» հիմնադրամը 01.02.2018թ. 01/103 գրությամբ հայտնել է, որ «ԵՊՀ» հիմնադրամի «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում առաջնորդվել է Օրենքի դրույթներին համապատասխան և ներկայացված բողոքը համարում է անհիմն:

Ընթացակարգի արդյունքում հայտ ներկայացրել են երեք կազմակերպություններ: Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովը մերժել է, քանի որ ներկայացվել է պահանջները չբավարարող լիցենզիա: Սահմանված կարգով հանձնաժողովը երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին առաջարկել է ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Մինչև փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետի լրանալը << գնումների

բողոքարկման խորհուրդը բողոք է ստացել երրորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից: Ընկերությունը պահանջել է երեք դրույթներով հանձնաժողովի կողմից կայացված որոշումները կասեցնել կամ չեղյալ հայտարարել, մասնավորապես «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտը բավարար ճանաչելու որոշումը, քանի որ մասնակցի կողմից ներկայացված սահմանված 5 տոկոսի բանկային երաշխիքը գերազանցվել է:

Նմանատիպ խնդիր է առաջացել նաև երրորդ՝ «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի մոտ, երբ բանկային երաշխիքը սահմանված 90 օրը գերազանցել է, որը նույնպես սահմանված կարգի խախտում է: Այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովը վերջիններիս հայտը նույնպես համարել է բավարար և չի մերժել: Բողոքարկման փուլում հակընդդեմ բողոք է ներկայացրել «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն՝ խնդրելով հաշվի առնել վերոհիշյալ հանգամանքները և թույլ տալ երկու մասնակիցներին շտկել թերությունները, սակայն մերժվել է բողոքը:

Պատվիրատուն նշել է, որ հակընդդեմ բողոքը մերժվել է, քանի որ բողոքարկողը պահանջել է թույլ տալ երկու մասնակիցներին էլ շտկել բանկային երաշխիքում առկա թերությունները, ինչը չէր կարող բավարարվել, քանի որ բանկային երաշխիքը շտկման ենթակա փաստաթուղթ չէ: Բողոքը մերժվել է այդ հիմքով, այլ ոչ թե բողոքարկման խորհուրդը գտել է, որ սահմանված 90 օրվա գերազանցելը խախտում չէ:

Խորհուրդը «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի բողոքը բավարարել է մասնակի՝ 5 տոկոս ավել գումար ներկայացնելը համարելով հրավերով սահմանված կարգի խախտում, այդ որոշումով թույլ տալով գնահատող հանձնաժողովին Ընթացակարգի հետագա ընթացքն ինքը որոշել:

Դրա հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի բանկային երաշխիքում առկա է համանման խնդիր և սխալ երաշխիքը չի կարող մեկ կազմակերպության դեպքում համարվել սխալ, իսկ մյուսի դեպքում՝ բավարար և որոշել է մրցույթը համարել չկայացած՝ ներկայացրած հայտերից՝ հրավերի պահանջներին ոչ մեկին համապատասխան չլինելու հիմքով:

Պատվիրատուն նշել է նաև, որ «ԵՊՀ» հիմնադրամը դեռևս 2017թ. կազմակերպել է առողջության ապահովագրության հրատապ բաց մրցույթը, որպեսզի 2018թ. հունվարի 1-

ից ԵՊՀ աշխատակիցներն ունենային ամբողջական բուժապահովագրության փաթեթ: Մինչև դրա գործարկումը 3 բողոքների արդյունքում բավականին ժամանակ է անցել, իսկ աշխատակիցները մնացել են առանց ապահովագրության, ինչպես նաև հիմնադրամի խորհրդի որոշումով բյուջեն կրճատվել է, իսկ մրցույթը կազմակերպվել էր մինչև բյուջեի հաստատումը, իսկ գործոնային պայմանագիրն արդեն իսկ հետագա տարիներին խնդիրներ կստեղծի բյուջեի տեսանկյունից, ուստի անկախ բողոքներից հրավերի պայմանների փոփոխման անհրաժեշտություն է առաջացել: Գնահատող հանձնաժողովը պատրաստվում է կազմակերպել նոր գնման ընթացակարգ, նոր պահանջներով և նոր բյուջեով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.02.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԵՊՀ» հիմնադրամի կողմից «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 14.12.2017թ. հայտ է ներկայացրել «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 157 200 000 ՀՀ դրամ:

3. Ընկերության կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի 5-րդ կետով սահմանվել է, որ երաշխիքը գործում է մինչև 10.05.2018թ. ներառյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը համարել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված երաշխիքի ժամկետը գերազանցում է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրը, որի հետևանքով վերջինս խախտել է հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով նախատեսված պայմանները (1.5 ենթակետ):

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.7 ենթակետով որոշել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Նաիրի ինշուրանս» ՍՍՊԸ-ի 31.01.2018թ. բողոքը, «ԵՊՀ» հիմնադրամի 01.02.2018թ. 01/103 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԵՊՀ» հիմնադրամի կողմից «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կետի 7.4 ենթակետի համաձայն՝ ***հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:*** Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 14.12.2017թ. մասնակցության հայտ է ներկայացրել «Նաիրի ինշուրանս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը որպես հայտի ապահովում ներկայացրել է ***14.12.2017թ. թիվ 4097-17*** բանկային երաշխիքը, որի 5-րդ կետում նշվել է, որ վերջինս գործում է մինչև ***10.05.2018թ. ներառյալ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.5 ենթակետով արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի ժամկետը գերազանցում է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օրը, որի հետևանքով վերջինս խախտել է հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով նախատեսված պայմանները:

Արձանագրության նույն կետի 1.6 ենթակետով գնահատող հանձնաժողովը «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը համարել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել:

24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.7 ենթակետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է չկայացած հայտարարել «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգը՝ որպես հիմք մատնանշելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Այսպես, Խորհուրդն, ուսումնասիրելով «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը, գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված հիմքով մերժելով Ընկերության հայտը գործել է ոչ իրավաչափ:

Մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.4 ենթակետով նախատեսվել է, որ ***հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:***

Նշված դրույթի համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացվող հայտի ապահովման նվազագույն ժամկետը պետք է լինի առնվազն ***90 (իննսուն) աշխատանքային օր:*** Այսինքն վավեր լինելու 90 (իննսուն) աշխատանքային օրվա պահանջը պետք է մեկնաբանվի որպես նվազագույն այլ ոչ թե առավելագույն ժամկետի պահանջ, որին պետք է համապատասխանի հայտի ապահովումը: Հետևաբար հրավերի նշված դրույթի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ հայտի ապահովման վավերականության ժամկետը պետք է լինի ոչ թե մինչև 90 (իննսուն) աշխատանքային օր, այլ առնվազն 90 (իննսուն) աշխատանքային օր:

Տվյալ դեպքում «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի վավերականության ժամկետը սահմանվել է մինչև 10.05.2018թ. ներառյալ, ինչը նշանակում է, որ այն գերազանցում է հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օրը, քանի որ ընկերության կողմից հայտը ներկայացվել է 14.12.2017թ.:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքը բավարարում է հրավերի 7-րդ կետի 7.4-րդ ենթակետով նախատեսված հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր վավեր լինելու պահանջը:

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 31.01.2018թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

«Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 31.01.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. պարտավորեցնել «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով կայացված՝ նույն արձանագրության 1-ին կետի 1.5 ենթակետով նշված հիմնավորմամբ «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

2. պարտավորեցնել «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.7 ենթակետով կայացված՝ «ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-17/116» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**